

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան դիմում 10 րոպեի. կես տարվանը 6 րոպե.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакеъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Նմանազրույթները բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւնները ընդունուում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խմբագրատանը տողաւորով 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

Թագուհի Անդրեանեան Բարսեղաբեկին իր որդիներն ու հարսներով ցաւօր
սրտի յայտնում է ազգականներին և ծանօթներին իր սիրեցեալ փեսայի՝

ԳԵՂՈՐԳ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻ

Մահը, որ տեղի ունեցաւ ամսին 17-ին Յուդարկաւորութիւնը տեղի կունենայ զեկ-
տեմբերի 19-ին, կիրակի օրը, ստաւառեան ժամին 10-ին, իր բնակարանից (Չավչա-
վաճեան փողոց № 4) զէպի Նորաշէնի ս. Ստաւառածախն եկեղեցին, այնտեղից խոշ-
վանքի գերեզմանատուն: Ամբողջը շաբաթ օրը, երեկոյեան ժամին 6-ին: 1—1

Երկարատե և ծանր հիւանդութիւնից յետոյ ամսին 17-ին վախճանվեց

ԳԵՂՈՐԳ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻ

Այս մասին ցաւօր սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին—ամուսինը՝ Մա-
րիամ Ստեփանեանը, որդիք Ստեփան, Ալեքսանդր, Նազար և Տիգրան Գեղարեաններ
և եղբայրը Սարգիս Գառնարեան: Մնացածներն են: Յուդարկաւորութիւնը տեղի
կունենայ զեկտեմբերի 19-ին, կիրակի օրը, ստաւառեան ժամին 10-ին, իր բնակարա-
նից, Չավչավաճեան փողոց № 4 զէպի Նորաշէնի ս. Ստաւառածախն եկեղեցին, այն-
տեղից խոշվանքի գերեզմանատուն: Ամբողջը շաբաթ, ժամին 6-ին: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաղադրական տեսութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Թատրոն և երաժշտու-
թիւն. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լու-
րեր. —ՀԱՌԱՊԵՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վարկաբան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւրոպան վերջացնում է իր հին տա-
րին: Մենք էլ մի տասնեակ օր յետոյ
ճանապարհ կը գցենք հինը և կը դիմաւոր-
ենք նորին: Միութարական վիճակի մէջ
չէ թողնում մարդկութիւնը հին տարին:
Պատերազմը, որ սկսվեց այս տարվայ
սկզբին, ոչ միայն չը վերջացաւ, այլ և
յուսակի հիմունքներ չէ տալիս եմթադ-
րելու, որ նա շուտով, զիջուք մի քանի
ամսից յետոյ կը վերջանայ: Մինչև ան-
գամ ապահովութիւն չը կայ նոյն իսկ
այն բանի մասին, թէ պատերազմը կը
մնայ սահմանափակ շրջանում և հանգէս
չեն գայ բարդացնող հանգամանքներ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՔԻԼԱՍԵՒՆ

Երբ վերջացաւ թղթի ընթերցանութիւնը,
կրկին սկսվեց ազգուկը: Ճանապարհը դարձաւ
ժողովրդին խօսելու համար: Գլխից, նկատելով
այդ, բարձրագոյն գոտաց՝

—Տաղ արէք, ուղարկին խօսում ա:
Իսկոյն լուծելու տիբեցի, Բոլորն էլ դալ ձ-
րին երեսները տանուէրին:

Ա՛ խալիսը,—ասաց տանուէր Աղասին,—
էդ ա տեսնում էք, որ խուլ ցաւը գալիս ա:
Ղալաշի հողումն ա երեսները ու հիմ էլ կա-
մաց կամաց դէպի մեզ ա գալիս: Ասում են
էստեղ, շահը իրան շարուն, օրը հազար, եր-
կու հազար մարդ ա կոտորուում: Անտէր ցաւը
շահին որ խալիսը չենում ու նրա աչքի առա-
ջին էղբան մարդ ա փչացնում, միջ իսկի չի
խալիսը անիլ, մեզանից աւելի կը կոտորի,
եթէ գայ. գիւղումն էլ մարդ չի մնալ. գիւղը
կը դատարկվի. էդ լաւ իմացէք հա: Բարձր
իշխանութիւնը, Աստուած նրան բարի տայ,
հրաման ա արել էդ ա, որ թամուզ կենանք,
գիւղը մաքրենք, աղբը չը թողնենք, գիւղից
դուրս տանենք, աղբանոցները ոչ չափենք:
Ասում են զխալաւորները կազմեցնումը գրկի
են, որ որտեղ աղբը շատ ա, որտեղ փնթի,
կեղտոտ են ապրում, խուլ ցաւն էդ ա տա-
րածվում. լաւ լսեցէք հա: Բարձր իշխանու-
թիւնը հրաման ա անում, որ խուլ ցաւի հա-

Մենք տարվայ ընթացքում շատ յո-
գուածներ ենք նուիրել պատերազմին և
պատերազմի շուրջը կատարվող եղբու-
թիւններին: Այսօր մենք մտադիր չենք
շօշափել պատերազմական բեմի երևոյթ-
ները և խորհրդածութիւններ ներկայաց-
նել նրա առաջիկայ հաւանական գործա-
դուլութիւնների մասին: Այդ կը կատարենք
աստիճանաբար, հետեւելով նորագոյն փաս-
տերին և ուղղափառ հեղինակների ու-
սումնասիրութիւններին: Սակայն մի հան-
գամանք, որ պարզվեց վճռականապէս,
այն է Հեռաւոր Արևելքի խնդիրները
ստացան վերին աստիճանի լուրջ, չա-
փազանց մեծ և ընդարձակ միջազգային
նշանակութիւն: Եւրոպան առաջ էլ զբաղ-
վում էր Հեռաւոր Արևելքի հարցերով,
բայց նա բաւականաչափ խոր կերպով չէր
ըմբռնում թէ ինչ մեծ դրամա է պատ-
րաստվում թաղաղ Ովկիանոսի արևմտեան
շրջերի շրջանում:

Մենք կը ծանօթացնենք մեր ընթեր-
ցողներին այն նորագոյն ուսումնասիրու-
թիւններին հետ, որոնք լոյս են սփռում
նոր ստեղծվող և ձևակերպվող դերքերի

մար չորս վարի(*) շրջանը: Վարիները պէտք
ա շարաքը երեք անգամ գեղը պտտեն ու
ճամբերը, հայաթները, տները, գոմերն ու
աղբանոցները թամուզ անել տան: Ես միշտ
նրանց հետ իմ ընկու: Էգուցվանից պէտք ա
սկսենք գեղը մաքրել. մի-երկու օր պէտք ա
բոլորը էլ մնաք տանը ու էդ բանի ետեւից
կենաք. մի-երկու օրով պէտք ա հուճճն ու
փունջը թողնէք, կալ չը կայէք. բարձր իշ-
խանութիւնը հրամանը շատ ա թունդ է, շատ
Ով որ վարիներին հակառակվի, նրանց բե-
ֆին դիպի, նրանց հրամանները չը կատարի,
իր հայաթն ու գոմը չը մաքրի, իր դռան աղ-
բը դուրս չը տանի գեղից, նրանից ամենա-
բէժը տաւոր մանէթ շտափ կանեն ու իրան
էլ տունը կը գցեն. իմօցէք հա: Ինչպէս ասացի
ես ինքս միշտ վարիներին հետ ման պտեմ
գալ. լաւ իմացէք հա: Էս խուլ ցաւի ճանը
բանի կայ ու կըլի, ես համ ուղարկի եմ, համ
վարիբաշի: Ով մի բէժ գոնէ հակառակվի ինձ,
նրա կարկած բարկածը կը շարդեն, նրան
Սերի ուղարկելի կը տամ, Սերի: Ով փորձի
հացով, գինի արագով իմ ու վաքիներին խալիսը
աւելի, կաշառք տալ ու էդհէնց փնդ ու
փունջով աղատվի մեր պահանջներից, ձեռ-
ներն ու ոտները կապած նրան կուղարկեն
գերատուրքի կուշար: Նրա անունը գրենա-
տուրի սե դաւթարումը կը գրվի ու ինքն էլ
նող ու մոխիր կը կորչի: Իմացէք. որ նաչալ-
նիկ(**) ինքը գալ պտի գեղին մտիկ տայ. եթէ
գեղը մաքուր չը լինի, ինձ վարիներին Սերի
կուղարկելի է Սերի: Ինչ ա, ուղում էք, որ ձեր

*) Լիւազոր, հաւատարմատար:
) Գաւառապետ:

մասին թէ միջազգային և թէ տնտեսա-
կան ու հասարակական տեսակէտներով:
Մի կողմից եւրոպական պետութիւնները
և Ամերիկան, միւս կողմից Հեռաւոր Ա-
րևելքի ազգերը՝ հասցնացիները, չինա-
ցիները և ուրիշ ընկերներ կենքի կու-
մի նոր ասպարէզի վրա են ոտը կոխում,
որ կարող է ապագայի համար ստեղծել
մի շարք կոնկոմ և զժուար լուծելի հան-
գույցներ:

Եւրոպական հին քաղաքական հարցե-
րին աւելացան Հեռաւոր Արևելքի խոշոր
և բարդ հարցերը, Միջազգային քաղա-
քականութեան բովանդակութիւնը բար-
դացաւ նոր ուժեղ տարրերի մասնակցու-
թեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Մ Ո Ւ Ն

Դեղին վտանգի հարցը, այնուամենայնիւ,
շարունակում է մտածութեան նեւթ հայթայ-
թել Եւրոպայի քաղաքական և դիւանական աշ-
խարհին: Կը շարժվի Չինաստանը: Այս հար-
ցը ծնվում է վաղուց, բայց դարձել է օրվայ
համարեա հրատապ հարց այն ժամից, երբ ա-
ռաջին անգամ որոտացին ներկայ պատերազ-
մի թուղանութիւնը: Մենք մի անգամ խօսե-
ցինք այս ընդհանուր յուզում առաջացրած
հարցի մասին եւ եթէ այժմ նորից վերա-
դառնում ենք նրան, պատճառն այն չէ, որ
մտածողները գտել են նրա ճիշդ գուշակու-
թիւնը: Կը շարժվի Չինաստանը, թէ չի շարժ-
վի, մարդկային հեղեղներ կուղարկէ դէպի ա-
րեւմուտը կրակով և երկաթով ամեն ինչ ու-
նչացնելու համար, թէ կը նստէ իր տանը,—
հետաքրքրականը այդ չէ: Դեհնը թէ կայ ի-
րապէս այդ դեղին վտանգը, դեհնը թէ Չի-
նաստանը ճիշդ որ մարդկային այնպիսի ու-
կիտոս է, որ պտի դուրս գայ իր ակերից:
Ինչ պէտք է անել. Եւրոպան ինչպէս պտի
պաշտպանվի: Ահա այս հարցի վերաբերմամբ
երկու տեսակ կարծիքներ յայտնվեցին մի քա-
նի օր առաջ, Եւրոպայի երկու ծայրերում,
համարեա միաժամանակ, գիտութեան ծառա-
յող երկու մարդկանց ընկալով: Այդ երկու
ծայրերն են՝ Գե. իւ և Եկատերինօսով քաղաք-

իւթիւն ձեր պատճառով մենք տանով տեղով
կորչենք: Չէ, ես թող չեմ անիլ, որ դուք իմ
ու իմ իշխանների անիւք բանդէք. օր էս ետը
ինձ համար էլ բարեկամ-մարեկամ չի կ'սլ,
հարուստ ու աղքատ չի կ'այ. էս խուլ ցաւը
բանի կայ, ոչ միայն ինքեան էլ ա պահիլ չի
պտեմ: Բարձր իշխանութեան հրամանը շատ
ա թունդ է, շատ. իմ օրումը էսհէնց թունդ
հրաման չեմ ստացած. էս հրամանն, ասում
են, գերատուրքի վրա Պետրիպօլիէն(**) ա
եկել է, Պետրիպօլիէն. մէկ էլ օրը քաղաքումը
պրիստաւի գրագիրն ինձ էդ ասեց: Ա՛ տէր,—
դարձաւ տանուէրը քահանաներից աւագին,—
մի-երկու խօսք էլ դու ասա՛. երէց ես կար-
գաւոր եմ. բո խօսքը զօրաւոր կը լինի:

Ճանուտը Աղասին վերջացրեց իր ճառը:
Տէր Գալստի համար անսպասելի էր այդ
դիմումը: Ինչ ասէք նա. նրա դրութիւնը
շատ զժուար էր. տանուէրի ճառի ոչ մի
կէտի հետ համաձայն չէր նա: Նրա խորին
համոզմամբ խօսիլայի դէմ պէտք է կուել մի-
միայն աղթթներով, թափօրներով, մաղթանե-
րներով ու մատաղներով. գիւղի մաքրութիւ-
նից խօսիլան չի վախճայ. նա Աստուծուց ու-
ղարկած պատիժ է, հաւատը սողալի պատիժ:
Բայց իր սրտին ասել այդտեղ տէրտէրը չէր
կարող. այդ կը նշանակէր բարձր իշխանու-
թեան հրամանին հակառակ բան ընել. պէտք
էր հաստատել տանուէրի ասածները ու ակ-
նարկներով միայն հասկացնիլ, որ բացի բար-
ձր իշխանութիւնից Աստուած չ'էս կայ, որ
նրա պահանջներն ու պատուէրներն էլ պէտք
է կատարել: Տէր Գալստի կարմրեց, ըրտա-

**) Պետերբուրգից:

ները, մէկը Գերմանիայում, միւսը Ռուսաս-
տանում: Կեօյնում դեղին վտանգի մասին դա-
սախոսութիւնը կարգաց գերմանական պրօֆէ-
սոր Շնիցլէր, Եկատերինօսովում՝ պրօֆէսոր
Շաչնիկօ: «НОВОСТИ» լրագիրը այսպէս է հա-
կադրում երկու դասախօսների առաջարկած
այն միջոցները, որոնք պտի անփափա դարձ-
նեն դեղին վտանգը:

Գերմանական պրօֆէսորը առաջարկում է
ստեղծել մի անագին եւրոպական բանակ,
որ, յարձակվելով Չինաստանի վրա, խու-
ժելով այդ երկրի մէջ, օրով և կրակով առ-
նէր չինական այն հեղեղի առաջը, որ պտի
դուրս գայ իր ակերից և թոյլ չը տար, որ
Չինաստանը, հաղորդվելով եւրոպական հու-
տուրային, դառնայ մի անաւոր և սարսա-
փելի թշնամի:

Ռուս դասախօսը, ընդհակառակը, Չինաս-
տանը անփափա դարձնելու համար՝ առաջար-
կում է եւրոպական պետութիւններին ձա-
նապարհվել դէպի Չինաստան. խաղաղու-
թեան արմատները ճիւղով և երկուս գալ
«երկնքի որդիներին» երկրում ոչ թէ զրա-
հակիրներով, թուղանութիւնով և սուկներ-
բով, այլ գիտութիւն, գրականութիւն, տեխ-
նիկա և առաջադիմութեան կրօնը ունած ի-
րանց ձեռքում: Ռուս պրօֆէսորի կարծիքով
կրակն ու սուրը չեն դեղ չինական վտանգի
դիմաց, այլ առաջադիմութեան կրօնը:

Այն ժամանակ, երբ գերմանական գիտ-
նականը քարոզում է, որ Եւրոպան չինա-
կան արշաւանքից ազատելու համար պէտք
է որքան կարելի է երկար ժամանակ պահ-
պանել տգիտութիւնը և յետաձգել իրենց
Չինաստանում, նրա առաջ ընկերակիցը,
ընդհակառակը, Եւրոպայի ազատութիւնը
տեսնում է Չինաստանը եւրոպականացնելու
մէջ:

Ճիշդ որ շատ աչքի ընկնող է հակադրու-
թիւնը այդ երկու հայեացքների մէջ: Մէկը
հին, գիշատիչ զինուորականութեան է խուճի
ծիւղը, միւսը՝ աղբերի եղբայրացութեան,
մարդասիրութեան միշտ թաւը ու գեղեցիկ
իդէալին: Բայց մենք կարծում ենք, որ դուր
է ուսն լրագիրը այդ հակադրութիւնը կապում
հայեացքներ յայտնող երկու պրօֆէսորների
ազգութեան հետ: Որ Շնիցլէրներ կան և
Ռուսաստանում, ինչպէս և ամեն մի երկրում,
իսկ Շաչնիկները այնքան էլ բէժ չեն: Գեր-
մանիայում և առհասարակ Եւրոպայում,—այդ
աւելի բան պարզ է ամեն մէկի համար: Ան-
կախ ազգութիւններից և աշխարհագրական

նեց սաստիկ, հանեց գրպանից բռնութեւ մէջ
շաղախված գունատը թաղիկնակը, սրբեց
նրանով ճ. կատը, ծանր ու բարակ բռնութի
բաշեց, խիւքն այդպիսով զլուրը հաւաքեց ու
դարձաւ ժողովրդին:
—Ա՛ ժողովուրդ,—ասաց նա,—մեր ուղբա-
շին ինչ ասեց, միանեց լաւ պահեցէք ու
կատարեցէք. նա ամեն բան ասեց. ես էստեղ
բիշ բան ունեմ ասելու. բարձր իշխանութեան
և հրամանը սրբութեամբ կատարեցէք. մեր օգ-
տի համար ա նա եկել էնքան հեռու տեղից:
Անա... Անա Աստուծն էլ միտներդ պահեցէք
է, Աստուծն. նրա փէշը պիտը բռնեցէք. իսկի
բաց չը թողնէք. խուլ ցաւը նա ա ուղարկել.
մեր մեղքերը շատ են, շատ անչափ... Դիւղը
մաքուր պահելը բաւական չի. պէտք ա մեր
սրտին էլ շահներ. Աստուծ, որ իր ցասումը
գարձնի մեզանից, իսկ ողորմութիւնը թափի
մեզ ու արար աշխարհի վրա... Է՛ն էլ ինչ աս-
են. էստեղ տեղը չի ամեն բան ասելու. իմ
ասելիքները ես ձեզ ժամուրդ կանամ. ժամ ե-
կէք ամեն օր, ժամ, մ օրնվածներ:

—Փառաւոր ըլիս դու, մ տէր, փառաւոր,—
լովեց ամբողի միջին,—դարմանն էդ ա, որ
ասեցիր. կաններ, ինչ ասեցիր, կը կատարենք.
Աստուծ փէշը պիտը կը բռնենք:

—Աստուծ սիրաւ կը շահներ, մ տէր, միա-
միա կաց,—ասաց տանուէր Աղասին,—գիւ-
ղը մի բիշ մաքրեցինք թէ չէ, պէտք ա մաղ-
թանքներ ռ մատաղների ետեւից կենանք,
ամեն օր Աստուծ դուրս թակենք. օխաւ սա-
րի պիտը պէտք է օխաւ մաղթանք կատարեն,
մեծ աւետարանը պէտք ա դուրս բերես. ա-

սուրբններ կամ կուրսեր: Լսել ցանկացողները պէտք է վճարեն 30 րուրի: Այդ կուրսերը մտնելու համար անհրաժեշտ է ունենալ միջնակարգ դպրոցի վկայական:

Գաւառական ժողովրդական մէջ, ասում է «P. C.» լրագիրը, միտք է յղացել հրաւիրել մամուլի գործիչներին համաժողովում ժողով: Այդ նպատակով նրանք դիմել են Պետերբուրգի հրապարակագիրներին և խնդրել, որ նրանք կազմակերպեն այդ ժողովը, որքան կարելի է շուտ:

Կուրսովում հրաւիրվում է ժողովրդական դպրոցների ուսուցիչներին համաժողով: Հրաւիրագրի վրա տպված են բոլոր քննիչի հարցերը և վերջը աւելացրած. «Ուրիշ հարցեր կարող են յարուցվել միայն նախագահի և ներկայ եղող ուսուցիչների (խաղաղների) և ժողովրդական դպրոցների տեսչի թոյլտուութով»:

Կիշինեվից գրում են «Од. Нов.» լրագիրն, որ իշխան Ս. Գ. Ուրազովի մեկնելուց յետոյ անտիսեմիտական չարամիտ պրօպագանդը կրկին զօրացել է և ազդեցականութան մէջ անհանգստութիւնն աճելով, ղեկավարներ 5-ին հասել էր ընդհանուր սարսափի: Ժողովրդին հանգստացնելու համար նահանգապետ Ի. Վ. Բոլովը հրամայել է, որ պահակներ ման գան քաղաքի կառկածները մասերով, իսկ ղեկավարներ 6-ին երեւցել է նրա հետեւող յայտարարութիւնը. «Վերջին օրերում շատ են լսուում Կիշինեվում պատրաստվող անկարգութիւնների մասին: Այդ լուրերը թէ և ինքն ըստ ինքնա շատ յիմար են, սակայն անհանգստացնում են տեղական հասարակութեանը: Մեր հայրենիքի փորձութեան այս ծանր օրերում, երբ ամենքի ջանքը պէտք է ուղղված լինի Ռուսաստանի պատերը և զօրութիւնը պահպանելու, երկրի ներսում խռնակութիւն և պառակտում առաջացնելու ամեն մի փորձ պէտք է խայտառակութեամբ դրոշմվի: Ռուսական Կայսրի սիրտում սրտի համար բոլոր հպատակները՝ առանց դասակարգի ցիւղի և կրօնի խտրութեան, հաւատար են, այդ պատճառով Թագաւոր Կայսրի անունով կոչ եմ անում, բոլոր իսկական ուսանողներն պահպանել բոլոր մարդկանց շահերը և ստացվածները: Նախագիտչացնում եմ, որ մտքերը յուզելու, կարգն ու հանգստութիւնը խանգարելու բոլոր փորձերի դէմ չեն դժուարանայ ձեռք առնել ամենամեղակա միջոցներ, որ օրէնքն ինձ թոյլ է տալիս, իսկ յանցաւորներին ենթարկելու պատասխանատուութեան, համաձայն ուժեղացրած պաշտպանութեան օրէնքներին»:

ԱՄՏԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆրանսիական մամուլը պատերազմի մասին «Patrie» լրագիրը հրատարակել է իր խորագիրը, յայտնի նացիոնալիստ պատգամաւոր Լիւսիէն Սիլվեռան մի յօդուրով, որի մէջ ասված է. «Պետ-Արտուրի նաւատորմի ոչնչացումը չափազանց սաստկացնում է դժուարութիւնները Հեռուստը Արեւելքում. նա դարձնում է ծովագետ Ռօստոմիրի միասնական անյուշալի և վտանգաւոր: Ո՛րք է գնում նա: Կաշողի նրան կատարել միջին վարդիօստով հասնելը այն հրամանները, որոնք գեռ ոչ օրէի յայտնի չեն և որոնք կը հասցնեն նրան կամ փառաւոր դերի կամ տրագիկական վախճանի: Կարող կը լինի գնեցնել Ստեփանը, ծովի կողմից որ և է օգնութիւն չստանալով, շարունակել իր գերմարդկային դիմադրութիւնը: Արեւծք գնեցնելով Կարօպատկիին բանակը Ռուսաստանի վերջին յոյսը կը լինի: Անգլիան չէ ծածկում իր հաճոյքը, որ պատճառում է նրան Պարտ-Արտուրի զբաղւորներին կորուստը: Այժմ ամբողջ աշխարհը կարող է պարզ տեսնել բրիտանական դիպլոմատիայի խաղը, որ պատրաստեց և արժարժեց այս հակադէմ ընդհարումը: Մի աւելորդ անգամ էլ Անգլիան անհաջողացնում է իր անվտանգութիւնը, տարածում է իր ազդեցութիւնը, ամբացնում է իր հզօրութիւնը ուրիշների արեւմտ: Ման-Լուրիայում տեղի ունեցող սոսկալի արեւմտեւորութիւնը, որ սարսափեցնում է ազգերը և կառավարութիւնները, առաջ է բերում Անգլիայում միայն արուեստական յուզմունք: Անգլիայի բազմազան գործիչները և պետական մարդիկ ուրախանում են, որ ուսական տիրապետութիւնը Հեռուստը Արեւելքում ցնցված է

և այն ևս այն ձեով, որ Անգլիան իր կողմից մի կաթիլ արիւն անգամ չը թափեց: Այժմ Անգլիան յաղթանակում է: Նա յոյս ունի իր նպատակին հասնել, որովհետեւ Պարտ-Արտուրի զբաղւորներին ջրասող լինելուց յետոյ Պարտ-Արտուրի զրոյթիւնը, նրա կարծիքով, դառնում է կրիտիքական. բալտիկական նաւատորմը գնում է անհաւասար կռիւ հանդէպ: Որպէս զի այդ կռիւը աւելի քիչ վտանգված լինի, անհրաժեշտ է ապահովացնել Ս. Ժողովի նաւատորմի ազատ անցքը Դարդանէլով: Բայց Անգլիան այդ չէ կամենում: Նա յայտնել է ից հաստատ վճիռը թոյլ չը տալ, որ ուսաց նաւերը անցնեն նեղուցներով: (C. B.)

Պատերազմի արժողութիւնը: Գերմանական բանակի գնդապետ Ռիտտեր Ֆոն Րէնո, շատ ձեռնհաս անձն ոչ միայն պատերազմական գործերի, այլ և ֆինանսական հարցերի մէջ, հրատարակել է մի հաշիւ, որ ցոյց է տալիս թէ ժամանակակից եւրօպական պատերազմը որքան կարճեցաւ: Դատելով Ֆրանս պրուսական պատերազմից, Րէնոն ենթադրում է, որ ժամանակակից մեծ եւրօպական պատերազմի արժողութիւնը պէտք է հաշուել օրական 6 շէլից ամեն մի զինուորի համար: Գերմանական կայսրութիւնը կարող է դուրս հանել 4,900,000 հոգի զորք և նրա համար պատերազմի արժողութիւնը որոշվում է 3,000,000 ֆունտ ստերլինգ օրական: Պատերազմը Գերմանիայի և Ռուսիայի մի մեծ պետութեան մէջ կը նստի երկուսին օրական 6,000,000 ֆունտ ստերլինգ. ենթադրելով, որ երկու մեծ պետութիւններ կը սկսեն պատերազմ երկուսն էլ ամբողջ շատ մեծ պետութիւնների դէմ, ընդհանուր օրական ծախսը կը հասնէ 10, նոյն իսկ 15 միլիոն ֆունտ ստերլինգի: «Որտե՞ղ կը դառնան պատերազմող երկուսը այդ գումարները» — հարցրեց Րիտտեր Ֆոն Րէնոն, որի բոլոր հաշիւները ուղղված են առ այն, որ ապացուցանէ նկատողական կերպով ժամանակակից եւրօպական պատերազմի աւելի քիչ նւննակութիւն և առեւտրական հետեւանքները: (P.)

Ֆրանսիական ազգային հանգանակութիւն ի նպատակ ունի վերաւորներին. այժմ լրագիրները հաղորդում են, որ հանգանակութիւնը փակվեց, և նա տուել է 6,469,017 ֆրանկ:

ԱՄՏԱԿԻ ՀՅՈՒՄՈՐԻՆԵՐԸ

ԱՐՏԱԿԱՆ ԶՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսներու — բազմաթիւ: Պարտագաղթայի թագուհի Անիլիան, չը նայելով որ 40 տարեկան է, աշխուրհեամ ասարածք թոճակաւ գիտութիւնների ընթացքը և այժմ պատրաստվում է քննութիւն տալ թոճակաւստութեան դոկտորի աստիճանի համար: Նօրեյեան մեցանակը: Նօրեյի սահմանած մրցասակների մէջ խաղաղութեան մրցանակը տրվել է այս տարի միջազգային իրաւունքի ինստիտուտին (institut de droit international), որ գոյութիւն ունի 1871 թւից և բաղկացած է 50 անդամներից, ընտրված բոլոր ազգերի անձներից, որոնք ծառայութիւն են մատուցել միջազգային իրաւունքի զարգացման գործին: Ինստիտուտը կազմակերպում է պարբերական ժողովներ և արդեն 20 տարի է, որ հրատարակում է իր տարեցոյցը:

Հուլի միջնադարի ֆինոսիւնը: Միջազգային քննիչ յանձնաժողովը, որ պէտք է քննէ Հուլի միջնադարը, ղեկավարներ 9-ին սկսեց իր պարզամտութիւնը Պարիզում արտաքին գործերի միւնիստրութեան մէջ: Առաւօտեան ժամը 10-ին յանձնաժողովի բոլոր անդամներին ներկայութեամբ կոմսարքներից աւագագոյնը, ծովագետ Կառլուսովը բացեց նիստը և կարգավորված անգամ կառավարութիւնների կողմից նշանակված պատուիրակների ցանկը, առաջարկեց իր պաշտօնակիցներին ընտրել նախագահ, մինչև հիշգրտող կոմսարքի գալը, ծովագետ Ֆուրնիլին: Ֆրանսիայի պատուիրակ Ֆուրնիլին, ընդունելով նախագահութիւնը, յայտնեց շնորհակալութիւն յանձնաժողովին և առաջարկեց ընտրել գլխավոր քարտուղար պ. Սուլեանտ-Բօշէնին: Նախագահը ժամանակաւորապէս բացեց նիստը և առաջարկեց ընտրել հիշգրտող կոմսարքին կամ միջնադարը զատուրին, որի ձայնը վճռական նշանակութիւն պէտք է ունենայ ձայների հաւասարութեան դէպքում: Կոմսարքները միաձայն ընտրեցին աւստրիական ծովագետ Բարոն Շպուռ-

նին: Ընտրութեան հետեւեց նախագահը յայտնեց երկու դաշնագիր պետութիւններին, որպէս զի հաղորդեն իրանց կառավարութիւններին: Դրանից յետոյ նիստը յետաձգվեց մինչև յունվարի 9-ը (ն. տ.): Յանձնաժողովի անգլիական անդամները վերադարձան Անգլիա, ամերիկականը՝ ծովագետ Դէյվիսը գնաց Նիցա, իսկ ուսանողները մնացին Պարիզում:

Ալեքսեյի բողոք: «Ֆրանկֆուրտեր Լրագիր» Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ ուլէմները ներկայացրին սուլթանին մի բողոքագիր բարձր ֆինանսական յանձնաժողովի ձեռնադրութիւնը, որը իբր թէ վարում է վտանգաւոր քաղաքականութիւն սուլթանի և ամբողջ Թուրքիայի համար:

Կ. Պոլսից «Daily News» լրագիրն հեռագրում են, որ վերջերս Հայաստանի գրութիւնը առանձնապէս անտանելի է դարձել: Քիւրդերը բոլորովին անպատիւ կերպով կողոպտում են հայկական գիւղերը տեղական իշխանութիւններին աչքի առջև: Գարնանը սպասվում է արատաւորութիւն և 1894 թւի սարսափների կրկնութիւնը:

Վիեննայից հեռագրում են, թէ Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համաձայն Դիարբէքլի վիլայէթում կազմվել է թիւրք երրորդ աստիճանի զինուորական իշխանութիւն, որ իրան նպատակ է դրել ոչնչացնել հայ յեղափոխականներին: Ասում են, որ դաշնակցութիւնը վայելում է իշխանութիւնների հովանաւորութիւնը:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՆԵՐԸ

ԻՌՈՒՍԱՆ ԶՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16 ղեկտեմբերի: ՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Լէօն Բարիսովիչին թոյլատրված է վերա տեղափոխել հրեական «Դէր Տօզ» հրատարակութիւնը:

Բէլէլ, 15 ղեկտեմբերի: Բացված է ժամանակաւոր երթեկութիւն կէդէլ գանսանեան երկաթուղու վրա, ճանապարհորդների երթեկութեան համար առ այժմ օրական կը լինի մէկ անգամ:

Վիէննա: Միւնիստր. նախագահ Կերէր վրձնեց հրաժարական տալ և ստիպողաբար խնդրում էր կայսրին թոյլատրել իրան հրաժարականի խնդրը տալու:

ՊԱՐԻՉ, 15 ղեկտեմբերի: Սենատն ընդունեց ժամանակաւոր բեւոյժեւոր, իսկ յետոյ տեղի ունեցաւ պարլամենտի 12-րդ նստաշրջանի փակումը:

ԲԱՆԳԻՍԿԻ: (Բէյութը): Դեկտեմբերի 17-ին կը կայանայ հողի յանձնումը Ֆրանս-սիամական դաշնագրի համաձայն: Ֆրանսիայիները պարտաւոր են ապա մաքրել Չանտարանը տաս օր ժամանակամիջոցում:

ԿԵՕԼԱ: Կեօնի լրագիրն Տանթերից հաղորդում են, որ օտար պետութիւնների դիվոմատիկական ներկայացուցիչները և հպատակները, բացի ֆրանսիացիներից և անգլիացիներից, մնում են Ֆէրուս:

ԿԵՆԳԻՍԻՐԻ: Ռուս կալուածատէր Ֆոն Օլսէն, ծանր կերպով վերաւորվելով Իւդիտաէնում, Կէնգիսբէրգի մօտ, նորեքս կայացած մենամարտի մէջ, երէկ վախճանվեց այստեղ կիւրիկայում:

ՏՈՒԼՈՆ: Ռուսական ծովային շինարարական մասի երկու գնեցնողներ և ֆրանսիական գլխավոր ինժեները ժամանեցին այստեղ, շարունակելով ճանապարհորդութիւնը, որ նրանք ձեռնարկել են ուսական հաւատարմը վերականգնելու նպատակով և աչքի էին անցնում Ռուսաստանի համար կատարվող աշխատանքները:

ՕՐԵՈՒ: Անուականների ժողովը ազնուականութեան նահանգական պարագլխի առաջնորդութեամբ, վճռեց հեռագիրներ ուղարկել գնեցնող-աղիւտանտ Ստեփանին յայտնելով իրանց հիացմունքը գէպի Պարտ-Արտուրի պաշտպանների հերոսութիւնը և ողջունել հեռագիր ուղարկեցին գնեցնող-աղիւտանտ Կուրօպատկիին:

ՏՈՒԿՈ, 16 ղեկտեմբերի: (Բէյութը): Երազանցները ղեկտեմբերի 15-ին գրաւեցին Էրուշանեան բոլոր ամրութիւնները: Դեկտեմբերի 15-ին երեկոյեան հրատարակվեց կորուստների նոր ցուցակ, որի մէջ անվանված են 49 սպանված և 58 վիրաւոր օֆիցերներ:

ՆՕՎՊՕՐՕԻ, 16 ղեկտեմբերի: Նահանգական ազնուականութեան բացված հերթական ժողովը որոշեց արկանել առ ոտս Թագաւոր Կայսրի հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ, մատուցանելով ուղերձ: Ժողովին ներկայ էր ի մէջ այլոց Իշխան Վասիլիւիչով: ՄԻՆՍԿ, 16 ղեկտեմբերի: Պօստ-հեռագրական գրասենեակում տեղի ունեցաւ ծանոցի պայթումը, որ լցված էր վառօդով: Վիրաւորված է պահապանը:

ՅԱՐԻՅԻՆ, 16 ղեկտեմբերի: Սաստիկ փո-

թորիկի ժամանակ այրվում են Բալտիկէվի և Բաշէնիների ծովափի փայտե պահեստները Բէլէլեւովում, վաղեկավաղեան երկաթուղու կայարանի մօտ:

ՍԹԷՆԲ, 16 ղեկտեմբերի: Նոր կարենտը կազմակերպված է. Դէլիանիս-նախագահ և ներքին գործերի միւնիստր, Սկուցէս-արտաքին գործերի, Մալրեիլիւսիս-գնեցնողական և ծովային միւնիստրութեան ժամանակաւոր կառավարիչ, Կէրապանս — արդարադատութեան և ժամանակաւորապէս՝ ժողովրդական լուսաւորութեան և Գօնարակիս-ֆինանսների:

ՏՈՒԼՈՆ, 16 ղեկտեմբերի: Մատուցութիւն ունեն Մարօկո ուղարկել ֆրանսիական էսկադրա բաղկացած երկու զբահակիներից և երկու կրէյսէրներից:

ՊՐԱԳԱ, 15 ղեկտեմբերի: Կայսրը ընդունեց Կէրէքից հրաժարականի խնդրը:

Կ. ՊՕԼԻՍ, 15 ղեկտեմբերի: (Կօրը. Բիւրօ): Դաշնագիր պետութիւններին երէկ տրված պատասխանի մէջ Բ. Դուռը յայտնեց, թէ ինքն համաձայն է, որ 23 մարտ աւելացնի մակեդոնական ժանդարմերայի օֆիցէրներին թէ վրա և պահանջեց, բացի դրանից, որ այն երկրների կառավարութիւնները, որտեղից ազդեցութեամբ անցնում են դէպի Թիւրքաց հողը, ազդէին այդպիսի իրողութիւնները դադարեցնելու:

17 ղեկտեմբերի: ԼՕՆԴՈՆ, 16 ղեկտեմբերի: (Բէյութը): Ստացված է հետեւել ղեկուցաւոր պաշարողական բանակից Պարտ-Արտուրի մօտ. «Դեկտեմբերի 15-ին առաւօտեան 10 ժամին հապոնական բանակի կենտրոնի ձախ թէր օդը թոցից էլրուէզանեան մարտկոցի պատնէշը և ապա զրոհ տալով գրաւեց նրան: Երազանցները, զբաղելով բրուստովեւ, սկսեցին նրա վրա ամբուլութիւններ կառուցանել պաշարողական դաշտային թնդանութիւնի բաւարանների պաշտպանութեան տակ: Չը նայելով ուսանողի կրէրակին, կէսօրից յետոյ 4 ժամին երազանցիներին աշողվեց շտուրմով վերցնել և գրաւել ուսաց ծանր թնդանութիւնի գետնման ներքին գիծը: Յամառ կռիւց յետոյ ուսանողը դուրս մղվեցին ամրութիւնից և երեկոյեան մօտ 7½ ժամին էլրուէզան մարտկոցը եւսպոնցիների ձեռքում էր: Երբորդ երազանական բանակից Պարտ-Արտուրի մօտ հաղորդում են, որ էլրուէզան մարտկոցը գրաւվեց առաւօտեան երեք ժամին: Դեկտեմբերի 15-ին, առաւօտեան 10 ժամին, եօթը դիւնաւորային ականների պայթիւնով ձեռք բացվեց մարտկոցի բրուստովեւ, որի միջով թնդանութեան յին սարսափելի կրակի պաշտպանութեան տակ մտաւ երազանական հետեւի զօրիկ զօրաբաժին և անյապաղ գրաւեց դաշտային թնդանութիւնի առաջին գիծը: Տեղի ունեցաւ սարսափելի կռիւ, որը վերջացաւ մարտկոցի առմամբ:

ՏՕԿԻՈ, 16 ղեկտեմբերի: (Բէյութը): Երազանցների կորուստները էլրուէզան առեւելիս հաշուում են հազար մարդ: Դեկտեմբերի 14-ին ժամը 3-ին կէսօրից յետոյ ուսաց ծանր դաշտային թնդանութիւնը հարուածում էին երկաթուղային կամուրջը Շալէի վրա, կայարանի մօտ: Միաժամանակ ուսաց բաւարեւաները Տալիէնտունի մօտ հարուածում էին Ոսկեսառուն և Շուլիդու: Ռուսաց հեծելազօրը յարձակվեց Ոսկեսառուն վրա, բայց, արեւմուտքին ուսանողը յետ մղվեցին երազանական հեծելազօրից: Երեկոյեան ժամը 8½-ին ուսաց հեծելազօրը շրջապատեց երազանական պահուստային կայարանը, որը անսկսած նախել ստացաւ աշակցութիւն և յետ մղեց ուսանողին: Երազանցները կորցրին երեք մարդ:

ՊԱՐԻՉ, 16 ղեկտեմբերի: Նշանակված են իրաւագէտ խորհրդական ուսաց գործակալութեան Հուլի յանձնաժողովի մէջ Կ. Պոլսի ուսաց դիւանատան երկրորդ թարգման Մանիլեւումը և Պարիզի բողոքարկու պալատի փաստաբան Ֆրոմաշին:

ՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Կայսրը և Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչ մեկնեցին Հեռուստը Արեւելք գնացող զօրքերի դասաւորութեան տեղը:

17 ղեկտեմբերի: ՊԵՏԱԿԱՆ ԶՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: 16-րդ դիւնորական կորպուսի հրամանատար գնեցնող Բազանովին հրամայված է լինել վիրաւորներին Ալեքսանդրեան կոմիտեի անգամ: Ֆէրգանեան շրջանի զինւորական նահանգապետ գնեցնող մայր. Արանգորնիկս արձակված է պաշտօնից, իր խնդրագրով: Ի կազմակերպի կորպուսի վերա-

Тшпогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ», Мад. ул. № 15.